

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՆԵՐՔԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ

Յ. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Յ. Գ. ԶԱՅԻՍՅԱՆ

1990-ական թվականներին Հայաստանը, ինչպես և ԱՊՀ մյուս երկրները, ԽՍՀՄ-ից ժառանգություն ստացավ քայքայված, անկենսունակ տնտեսություն: Հապճեպ ռեֆորմների, տրանսֆորմացիոն անկման խորացման, ավերիչ երկրաշարժի և պարտադրված պատերազմի հետևանքով անկախության առաջին տարիներին անխուսափելի էր գրեթե համապարփակ տնտեսական ճգնաժամը: Տրանսֆորմացիոն անկումը հրամայական էր դարձնում դրամական առաջնահերթ կայունացումը, տնտեսության համեմատաբար արագ ազատականացումն ու մասնավորեցումը, ինչպես նաև կառուցվածքային այլ բարեփոխումների առաջանցիկ իրագործումը: Այսպես, արդեն 1994 թ. ՀՆԱ-ում մասնավոր հատվածի մասնաբաժնի ցուցանիշով Հայաստանը գերազանցում էր իր անմիջական հարևաններին՝ ընդհանուր հաշվարկում միջանկյալ դիրք գրավելով անցումային երկրների եվրասիական և արևելաեվրոպական խմբերի միջև, իսկ մեկ տասնամյակ անց՝ համարյա հավասարվելով վերջիններին: Ըստ 2004 թ. *Heritage Foundation* կազմակերպության Տնտեսական ազատության համաթվի՝ ԱՊՀ երկրներից միայն Հայաստանն է գտնվում երկրորդ՝ «հիմնականում ազատ» երկրների խմբում՝ այդ ցուցանիշով առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են Սլովենիան, Լեհաստանը, Մակեդոնիան, Բուլղարիան, ԱՊՀ առաջատարները:

Իրողություն է, որ անցումային տարբեր երկրներ գտնվել են տարբեր ելակետային դիրքերում, ինչն էլ պայմանավորել է փոփոխությունների ընթացքն ու արդյունքները: Վերափոխումային գործընթացների արդյունավետության ինտեգրալ չափանիշի համաձայն (փաստացի և պոտենցիալ ՀՆԱ-ի տարբերության նվազագույնի պայման, երբ պոտենցիալ ՀՆԱ-ի մեծությունը հաշվարկվում է նախամեկնարկային տարվա ՀՆԱ-ի հավելածի տեմպի էքստրապոլյացիայով)՝ առջևում, մեծ խզումով, Չինաստանն ու Վիետնամն են, այնուհետև՝ Սլովենիան, Չեխիան, Լեհաստանը, Հունգարիան և Սլովակիան, ապա միջին վերին խմբում՝ Խորվաթիան, Էստոնիան, Լատվիան և Լիտվան, միջին ստորին խմբում՝ Ռուսաստանը, Ղազախստանը, Բելոռուսը, Ռումինիան, Բուլղարիան, Ադրբեջանը, Հայաստանը, և վերջապես՝ հետսոցիալիստական մյուս երկրները¹:

Անցումային 27 երկրները 2003 թ. դրությամբ միջին հաշվով արձանագրել են իրական ՀՆԱ-ի 15% անկում՝ 1989 թ. համեմատությամբ: Ընդհանուր առմամբ նշված ժամանակահատվածում այս ցուցանիշի ան գրանցվել է միայն անցումային տասը երկրներում, մինչդեռ հիմնականում ԱՊՀ և մասամբ Հարավարևելյան Եվրոպայի 17 երկրներում 2003 թ. իրական ՀՆԱ-ն չի գերազանցել 1989 թ. մակարդակը: Եթե Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրները 2003 թ. միջին հաշվով ապահովել էին 1989 թ. իրական ՀՆԱ-ի 119% մակարդակ, ապա Հարավարևելյան Եվրոպայի երկրներում համապատասխան ցուցանիշը կազմել

¹ Տե՛ս «Материалы научной конференции “Ломоносовские чтения – 2003”». М., 2003, էջ 25:

էր ընդամենը 86%*, մինչդեռ ԱՊՀ երկրներում այդ ցուցանիշն էապես զիջում է նաև բոլոր անցումային երկրների միջինին և կազմում է միայն 75%:

Հայաստանում տնտեսական աճի միջին ցուցանիշը վերջին 10 տարում կազմել է 7.9%, իսկ վերջին 5 տարում՝ 10.5%: Թեև վերջին տարում իրական ՀՆԱ-ի աճը դանդաղել է՝ 2003 թ. 14.0%-ի փոխարեն կազմելով 10.1%, այնուամենայնիվ վերջին հինգ տարիների տնտեսական աճի միջին ցուցանիշով դիտարկված 46 երկրներից** Հայաստանը զիջում է միայն Թուրքմենստանին (16.5%): 2004 թվականին երկրի ՀՆԱ-ն գերազանցում էր 1990 թ. մակարդակը 11 տոկոսային կետով: Այս զարգացումների արդյունքում, ըստ ՀԲ դասակարգման, Հայաստանը «ցածր եկամուտ ունեցող» երկրի կարգավիճակից անցում է կատարել «միջին ցածրագույն եկամուտ» ունեցող երկրի կարգավիճակի: Ավելին, վերջին տարիներին ՀՀ տնտեսության աճի միջին տեմպը կրկնակի գերազանցում է այդ խմբի երկրների միջին ցուցանիշը: Հարկ է նշել, սակայն, որ աճի նման բարձր տեմպերը ինչպես Հայաստանում, այնպես էլ ԱՊՀ մյուս երկրներում տնտեսության պարբերաշրջանային զարգացման արդյունք են և երկարաժամկետ հատվածում չեն կարող կայուն լինել: Ուստի անիրատեսական է անգամ առաջիկա չորս տասնամյակների հորիզոնում Եվրամիության երկրների տնտեսական զարգացման միջին մակարդակին հասնելու հեռանկարը***:

Ինչ վերաբերում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշին, վերջին տարիներին այն ևս զգալի աճ է գրանցել Հայաստանում՝ 2003 թ. հասնելով 3607 ԱՄՆ դոլարի՝ հաշվարկված գնողունակության համարժեքությամբ: 2004 թվականի ընթացքում այս ցուցանիշը գրանցել է 26.5% անվանական և 10% իրական աճ (մնացյալ 16.5 տոկոսային կետի աճը պայմանավորված է եղել ՀՀ դրամի արժևորմամբ և ինֆլյացիայով): Այս ձեռքբերումներն ինքնին կարող են տպավորիչ լինել միայն շարունակականության դեպքում: Մինչդեռ, եթե առնվազն միջնաժամկետ հեռանկարում չապահովվեն տնտեսական աճի բարձր տեմպեր, ապա երկրում վտանգվում է երկարաժամկետ կայուն մակրոտնտեսական զարգացումը:

Այսօր համակարգային փոփոխությունների շնորհիվ ձևավորված նոր իրադրությունները առաջադրում են տրանսֆորմացիոն գործընթացի ավարտունության, արդյունավետության բարձրացման հիմնարար լուծումներ: Ընդ որում, խնդիրը չպետք է սահմանափակվի համակարգային վերափոխումներն ուղեկցող այնպիսի առերևույթ իրողություններով, ինչպիսիք են.

- տնտեսական ինքնիշխանության հաստատումը (ազգային դրամի, երկրի սեփական հարկային, ինչպես և արտաքին առևտուրը կարգավորող համակարգերի գործադրումը),

- անդամակցությունը միջազգային կառույցներին,

- հանրային սեփականության մասնավորեցումը և այլն:

* Ըստ ՎՋԵԲ դասակարգման՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու Բալթյան երկրները ներառում են Հունգարիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Սլովակիան, Սլովենիան, Չեխիան, Էստոնիան, Հարավարևելյան Եվրոպայի երկրները՝ Ալբանիան, Բուլղարիան, Բոսնիան և Հերցեգովինան, Մակեդոնիան, Ռումինիան, Սերբիան և Չերնոգորիան, Խորվաթիան:

** ԱՊՀ 12 երկրները, ԵՄ 25 երկրները, ԵՄ անդամակցության հավակնորդներ Բուլղարիան, Ռումինիան, Խորվաթիան, Թուրքիան, ինչպես նաև ԱՄՆ, Ճապոնիան, Ավստրալիան, Կանադան, Իրանը:

*** Հայաստանի և ԵՄ տնտեսական աճի՝ վերջին տասը տարիների միջին մակարդակում պահպանվելու դեպքում (համապատասխանաբար 7.9% և 2.2%) մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի՝ ԵՄ ցուցանիշին հասնելու համար Հայաստանին անհրաժեշտ կլինի 37 տարի:

Մրանք հիմնահարցի լուծումների տեսանելի կողմն են միայն, որը բավարար չափով իրականացվում է անցումային երկրներում: Իրականում երկրի անցումը շուկայական հարաբերություններին չեն կանխորոշում ո՛չ մինչ այժմ հրամցված արհեստածին և, ըստ էության, չգործող տնտեսավարման կառուցակարգերը, ո՛չ պարտադրված ինտեգրումը և ո՛չ էլ մասնավորեցման ու ապապետականացման սուկ թափն ու ծավալները: Այս առումով անցումային ժամանակաշրջանի ավարտը Հայաստանում (ի դեպ, ինչպես և մեկ տասնյակից ավելի անցումային երկրներում) դեռևս աննշմարելի է՝ պայմանավորված «հասանելիության» չհաղթահարված որոշ հանգամանքներով:

Մակրոտնտեսական կայունություն: Չնայած վերջին տարիների աննախադեպ բարձր տնտեսական աճին՝ գործադրված տնտեսական քաղաքականության արդյունքում սոցիալական առաջընթացն ու կայուն տնտեսական զարգացումը հետաձգվել են անորոշ ժամանակով, հանգեցրել մակրոտնտեսական խռատակալ կայունության: Նման իրավիճակը բացատրվում է այն հանգամանքով, որ տնտեսական աճը դեռևս չի ուղեկցվում զբաղվածության աճով և դրամական միջոցների ցանկալի ներհոսքով: Այսպես, պաշտոնական աղբյուրները 2004 թ. արձանագրում են գործազրկության 9.4% մակարդակ և այդ ցուցանիշի շարունակական նվազում, ինչն էապես տարբերվում է այլ անկախ հետազոտությունների արդյունքում ստացված գնահատականներից՝ մինչև 32%, վերջին տարում աճման զգալի միտումով: 2004 թ. առևտրային հաշվեմնացորդը ՀՆԱ-ի նկատմամբ դեռևս կազմել է մոտ 18%, թեև 1999-ի համեմատ կրճատվել է 13 տոկոսային կետով: Երկարաժամկետ հատվածում երկրի հավասարակշռված մակրոտնտեսական զարգացումը հարցականի տակ է դրվում նաև մակրոկայունացման ֆինանսական լծակների օգտագործման հետևանքով, երբ ինֆլյացիան զսպվում է տնտեսության մեջ շրջանառվող փողի զանգվածի արհեստական կրճատման ու ազգային դրամի արհեստական արժևորման միջոցով՝ տնտեսության իրական հատվածում առաջացնելով «նեղացող պարույրի էֆեկտի» պոտենցիալ վտանգ:

Գրեթե բացակայում է արդյունավետ սոցիալական համագործակցությունը «գործատու-վարձու աշխատող-արհմիություն» շղթայում: Ցածր աշխատավարձը չի կարող ունենալ բավարար հիմնավորվածություն: Եթե զարգացած երկրներում այն կազմում է ՀՆԱ-ի մինչև 70%-ը, ապա Հայաստանում մոտ 30% է:

Գործարար միջավայր և մրցակցություն: Բավարար չէ շուկայի գլխավոր մեխանիզմի՝ մրցակցության պաշտպանությունը: ՀՀ տնտեսության համար վարչական գներն ու սակագները դեռևս որոշվում են կառավարության և օրենսդիրների այս կամ այն գործողություններով, որոնք առավել բնորոշ են իրավիճակային գործելակերպին (հարկային արտոնություններ, որակի անլիարժեք վերահսկում, կոռուպցիոն ռիսկերի ոչ բավարար կանխարգելում և այլն): Առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից վարչական ռեսուրսների օգտագործումը խոչընդոտում է նոր, ավելի արդյունավետ ձեռնարկությունների մուտքը շուկա, նոր շուկաների ձևավորմանն ու ընդլայնմանը, տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացմանն ու արտադրության գների իջեցմանը: Նմանօրինակ խոչընդոտների առկայությունը թուլացնում է ընկերությունների արտադրանքի մրցունակությունը հատկապես արտահանման ժամանակ: Ուստի անբարեխիղճ մրցակցության հաղթահարումը տնտեսության վերելքի առաջնահերթ նախապայմաններից է, և օրենսդրության կիրառումը տնտեսավարող սուբյեկտների հանդեպ չպետք է անձնավորվի: Երկրում առկա ձեռնարկատիրական միջավայրի բնագծերը դեռևս հեռու են ժամանակակից շուկայի և արդյունավետ մրցակցության պահանջներին համապատասխան լինելուց:

Տնտեսության իրական հատվածում տնտեսավարող սուբյեկտների գրեթե մեկ երրորդը, այդ թվում՝ հետմասնավորեցման փուլում գործող ընկերությունները, տարիներով արձանագրում են վնասաբեր տնտեսական արդյունքներ, որի կանխարգելման ուղղությամբ արմատական քայլեր չեն ձեռնարկվել: Ըստ ՀՀ Հարկային պետական ծառայության տվյալների՝ 2004 թ. 1 մլն դրամից ավելի հարկային վնաս են հայտարարագրել 600-ից ավելի ընկերություններ, որոնց վնասի ընդհանուր չափը կազմում է ավելի քան 138 մլրդ դրամ: Դրանց շարքում են Երևանի «Ջրնուղ-կոյուղին», Ռուսալ-Արմենալը, «Արարատ» ոսկու արդյունահանման ձեռնարկությունը, ՀԱԷԿ-ը, «Սիգարոնը», Հայէներգոն, «Արմենիա» հյուրանոցային համալիրը և այլն²:

Հարկաբյուջեկաշին և դրամավարկային քաղաքականություն: Հարկային մուտքերը ՀՆԱ-ի նկատմամբ գտնվում են ցածր մակարդակի վրա (մինչև 15%) և աչքի են ընկնում անբարենպաստ կառուցվածքով: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը ցածր է անցումային երկրների միջին ցուցանիշից և, ինչպես կանխատեսվում է, կշարունակի ցածր մնալ հետագա տարիներին ևս: Գոյություն ունեցող հարկային բազայի և առկա տոկոսադրույքների պայմաններում, մեր գնահատումներով, այն պետք է հասներ ՀՆԱ-ի 1/3-ին: 2005 թ. առաջին կիսամյակի տվյալներով անուղղակի ռեգրեսիվ հարկերը ապահովում են ընդհանուր հարկային մուտքերի շուրջ 55-60%-ը: Ավելորդ չէ նշել նաև, որ, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, վերջին տարիներին իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը ավելի ու ավելի քիչ է նպաստում տնտեսական աճի կայուն տեմպերի պահպանմանն ու ընդլայնմանը: Այդ է վկայում 2004 թ. հարկային զգայունության գործակցի (հարկային մուտքերի տոկոսային փոփոխության հարաբերությունը ՀՆԱ տոկոսային փոփոխությանը) 1.1 արժեքը: Հարկաբյուջետային քաղաքականության բացերից են մնում հարկային դաշտի անհավասարությունը տնտեսվարող սուբյեկտների համար, կանխավճարների ու գերավճարների ինստիտուտի անարդյունավետությունը, տարածքային հավասարակշռված զարգացումը խթանող տարբերակված հարկային քաղաքականության բացակայությունը և մի շարք այլ խնդիրներ:

Այսօր երկրում իրականացվող դրամական քաղաքականությունը այլևս չի համապատասխանում երկրի երկարաժամկետ զարգացման պահանջներին ու տնտեսական իրականության փոփոխություններին: Փողի զանգվածի միջոցով սղաճի զսպման հնարավորություններն աստիճանաբար սահմանափակվում են, ազգային արժույթի զգալի արժևորման արդյունքում թուլանում է երկրի դիրքը միջազգային շուկայում (և դա այն պարագայում, երբ ակնհայտ է ՀՀ տնտեսությունում արտահանման աճը խթանելու անհրաժեշտությունը): 2004 թ. դրամական զանգվածի աճը 2003 թ. 33.3%-ի և 2002 թ. 21.4%-ի փոխարեն կազմել է ընդամենը 6.1%, մինչդեռ դրան զուգահեռ փողի շրջապտույտի զգալի աճը վկայում է տրնտեսության մեջ առկա փողի ավելցուկային պահանջարկի մասին: Վերջին տարիներին սկսել են թափ առնել տնտեսության ավելցուկային տաքացմանը հատուկ երևույթներ՝ սղաճի տեմպերի ավելացում, անշարժ գույքի գների առաջանցիկ աճ, դրամի իրական արժևորում և այլն: Այս իրավիճակում, կարծում ենք, անխուսափելի է դրամական քաղաքականության հենանիշերի փոփոխությունը՝ կամ դրամական բազայի կտրուկ ավելացման, կամ փոխարկելի արժույթների ազատ շրջանառության թույլատրման (ինչը կնվազեցնի փոխարկման գործարքային ծախսերը և

² Աղբյուրը՝ ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն, <http://www.taxservice.am>:

հնարավորություն կտա կանխել դրամի հետագա արժևորումը), կամ ֆիքսված փոխարժեքի (*currency board*) քաղաքականության որդեգրման և կամ այլ ուղղություններով³:

Արտահանման խրախուսում: Այսօր, երբ Հայաստանի տնտեսությունն անցում է կատարում տնտեսական զարգացման՝ ներկրման մոդելից դեպի արտահանման կողմնորոշում, կարևոր է դառնում վերջինիս խրախուսումը: Տնտեսության հիմնական ճյուղերի արդյունքը, բացառությամբ ծանր արդյունաբերության և ծառայությունների, գերազանցում է 1990 թ. մակարդակը, և դա այն դեպքում, երբ երկրի բնակչությունը նույն ժամանակահատվածում կրճատվել է ավելի քան 30%-ով (ըստ պաշտոնական տվյալների): Եթե այս միտումների կողքին հաշվի առնենք նաև ներմուծման զգալի ու շարունակաբար աճող ծավալները և աղքատության բարձր մակարդակը, ակնհայտ կդառնա, որ աճող արտադրական հնարավորությունների կողքին խիստ սահմանափակ է ներքին պահանջարկի ներուժը: Ուստի տնտեսության հետագա աճի գրավականը նոր՝ արտաքին շուկաներն են: Թեև զուտ արտահանման ցուցանիշը վերջին տարիներին բարելավվել է (տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2004 թ.՝ -15.2% 1998 թ. - 33.8% փոխարեն), այնուամենայնիվ այս ցուցանիշով 46 երկրների խմբում Հայաստանը վերջին տեղում է: 2004 թ. դրությամբ արտահանումը կազմել է երկրի արտաքին ապրանքաշրջանառության միայն 34.6%-ը և երկարաժամկետ զարգացման հեռանկարի տեսանկյունից աչքի է ընկել բավական անբարենպաստ կառուցվածքով: Արտահանումը հիմնականում կենտրոնացած է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, մետաղների ու դրամցից պատրաստված առարկաների (10 խոշոր արտահանողներից՝ 7-ը), սննդի արդյունաբերության և հանքահումքային ապրանքների ոլորտներում, որոնք ներկրվող հումքի, ցածր ավելացված արժեքի ու ռեսուրսային բազայի սահմանափակության պարագայում չեն կարող համապատասխանել արտահանման տնտեսության երկարաժամկետ գերակայություններին: Արտահանման կարևոր խոչընդոտ են նաև վերջին զարգացումները հայաստանյան արժույթային շուկայում, ինչպես նաև դեռևս չլուծված տրանսպորտային ու տնտեսական շրջափակման խնդիրները՝ (թեև կա տեսակետ, որ արտահանման ներկայիս կառուցվածքի պարագայում տրանսպորտային բարձր ծախսերը էական դեր չեն խաղում արտաքին շուկայում ՀՀ արտահանման մրցունակության տեսանկյունից):

Ֆինանսական հասպտած: ՀՀ բանկային համակարգի զարգացման աստիճանը դեռևս չի համապատասխանում տնտեսական աճի պահանջներին: Խիստ ցածր է փողայնացման մակարդակը, բավարար չէ ֆինանսական միջնորդումը ապահովագրական, ներդրումային, կենսաթոշակային, հիպոթեքային համակարգերով, ինչը չի նպաստում «երկար փողերի» առաջացմանը: ՀՀ կենտրոնական բանկը 2005 թ. մախատեսել է դրամային և փողի զանգվածների աճ՝ ՀՆԱ-ի անվանական աճը գերազանցող տեմպերով, ինչը կբերի փողայնացման մակարդակի բարձրացման: Այս իմաստով դրական է 2004 թ. փողի զանգվածում կանխիկի տեսակարար կշռի նվազումը, որը բացատրվում է ԱԱՀ, արժույթի և դրամարկղային

³ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Եղիազարյան, Վերջին զարգացումներն աշտարժույթի շուկայում. քանակական վերլուծության փորձ, «Հայաստանյան զարգացումներ», № 4 (Q3/04), Եր., 2004:

⁴ ՀՀ խորհրդակազմի Լ. Ֆրենկմանի և ուրիշների վերլուծություններում նշվում է, որ շրջափակման հետևանքով քերարտահանումը բավականին մեծ է, սակայն էապես ցածր է նախկին զնահատականներից և կազմում է ՀՆԱ-ի շուրջ 10-13 տոկոսը (տե՛ս «Տնտեսական քաղաքականություն և աղքատություն» ամսագիր, 2004, № 8):

գործառնությունների մասին օրենքներում կատարված նպաստավոր փոփոխություններով: Ավելին, երկրի բանկային համակարգն այսօր կարողանում է ապահովել միջազգային ստանդարտներով բավականին բարձր շահույթ: Այդ շահույթները, սակայն, ապահովվում են հիմնականում փոքր մասշտաբի, կարճ կամ միջին ժամկետայնության գործունեության տեսակների հաշվին՝ չնպաստելով բանկային համակարգի մասնակցությանը երկրի երկարաժամկետ կայուն զարգացման գործընթացներին: Այսպես, Հայաստանում մեծածավալ, հեռանկարային ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը բաժին է ընկնում բանկային համակարգի վարկային միջոցների մոտ 12%-ը միայն, մինչդեռ Եվրոպայում այդ ցուցանիշը հասնում է 55-60%, իսկ ԱՄՆ-ում՝ մինչև 70%: Բացի այդ, «բանկային համակարգի ֆինանսական միջնորդության գնահատման ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր ՀՀ առևտրային բանկերը շուկայում նոր գործիքներով հանդես գալու շահագրգռվածություն չեն ցուցաբերում, ինչը չի նպաստում բանկային համակարգի ֆինանսական միջնորդության դերի բարձրացմանը»⁵: Կարևոր խնդիր է նաև բանկային համակարգում շրջանառվող սակավ միջոցների՝ տնտեսության իրական հատվածում առավել արդյունավետ կիրառման ուղիների որոշարկումը:

Չլուծված է մնում ֆինանսական ենթակառուցվածքների հետագա զարգացման ու ընդլայնման խնդիրը, որը պետք է իրականացվի ոչ միայն արդեն որոշակի հաջողությունների հասած բանկային համակարգի գործունեության ոլորտների ընդլայնմամբ, այլև ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների ու ֆինանսական շուկայի նոր կառուցվածքային օղակների զարգացմամբ (հիպոթեքային վարկային կազմակերպություններ, ապահովագրական համակարգ, ներդրումային ընկերություններ, կենսաթոշակային հիմնադրամներ, լիզինգային և ֆակտորինգային ինստիտուտներ, կապիտալի շուկա, վեճաբանության կապիտալ): Գտնվելով «միջին ցածրագույն եկամուտ» ունեցող երկրների խմբում՝ ֆինանսական համակարգի զարգացածության հիմնական ցուցանիշներով Հայաստանը հետ է մնում մուլնիսկ ցածր եկամուտ ունեցողների խմբում ընդգրկված երկրների մեծ մասից:

Աղքատություն: Տնտեսական աճը բավարար չափով չի ուղեկցվում աղքատության կրճատմամբ: 2003 թ. դրությամբ ՀՀ բնակչության 43%-ը գտնվում է աղքատության գծից ներքև, էական է խզումը քաղաքային և գյուղական բնակչության եկամուտներում: Եթե 1999-2003 թթ. ՀՆԱ-ի գումարային աճը կազմել է 46%, ապա աղքատության ցուցանիշը մույն ժամանակահատվածում կրճատվել է միայն 12%-ով: Երկիրը եկամուտների անհավասարության և գեղքեռացման ցուցանիշով շարունակում է մնալ առաջատարներից մեկը տարածաշրջանում: Տնտեսական աճն անբավարար չափով է անդրադառնում նաև մարդկային զարգացման և սոցիալական ծառայությունների համակարգի արդյունավետության ու հասցեականության բարձրացման վրա:

Պեղական և Կարածքային կառավարում: Պետական կառավարման համակարգում անհրաժեշտ են հիմնարար կառուցվածքային և ֆունկցիոնալ բարեփոխումներ՝ վերացնելու համար պետական ապարատի ուռճացվածությունը, գործառույթների կրկնություններն ու բացերը, որպեսզի բարձրացվի տնտեսության պետական կառավարման արդյունավետությունը: Պետությունը պետք է կարողանա հանդես գալ որպես շուկայի սուբյեկտ՝ ապահովելով իր գործունեության արդյունավետությունն ու մրցունակությունը շուկայի չափորոշիչներին

⁵ «Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիր, 2005 թ.» ՀՀ ԿԲ, Եր. 2005, էջ 39:

համապատասխան: Մասնավորապես, անհրաժեշտ է վերանայել բյուջետային ֆինանսավորման սկզբունքները. անցում կատարել ըստ արդյունքի ֆինանսավորման և այլ ֆինանսատնտեսական լծակների միջոցով խթանել բյուջետային ծախսերի արդյունավետությունը: Պետական սեփականության կառավարման ուղորտում ևս անելիքները շատ են: Ընդ որում, դրանք պետք է ընթանան կամ պետական հատվածի բարեփոխման, կամ պետական սեփականության կառավարման գործընթացում մասնավոր սուբյեկտների ներգրավման ուղիով: Այս համատեքստում կարևոր է նաև տնտեսության ապաքաղաքականացման, հանրային և մասնավոր հատվածների միջև երկխոսության ու արդյունավետ փոխհամագործակցության հիմքերի ձևավորումը:

Կուտակված հիմնախնդիրների շարքը լրացվում է տարածքային քաղաքականության էական անհամամասնություններով, արդյունաբերական արտադրանքի արտահանման-ներմուծման, կապիտալ ներդրումների, գործազրկության և այլ ցուցանիշների գերբեռնացմամբ: Այսպես, 2003 թ. տվյալներով արդյունաբերական արտադրանքի շուրջ կեսը, արտահանման 36%-ը և ներմուծման 62%-ը բաժին են ընկնում Երևանին, մինչդեռ Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի համապատասխան գումարային ցուցանիշները 5%, 1% և 2%-ից էլ պակաս են:

Մարդկային կապիտալ և նորարարական տնտեսություն: Բավարար չեն ներդրումները մարդկային կապիտալում, գիտակրթական և առողջապահական ծառայություններում: Տնտեսության հագեցումը արդի տեխնոլոգիաներով և դրանով իսկ արտադրողականության բարձրացումը դեռևս չլուծված գերխնդիրների շարքում են, մինչդեռ տնտեսության զարգացման ժամանակակից միտումները պահանջում են խորհրդային շրջանից ժառանգված մարդկային ռեսուրսների գիտակրթական, մասնագիտական ներուժի վերափնաստավորում ու նորացում: Այսօր մեծ են գիտելիքի արժեզրկման տենպերը, և մարդկային կապիտալում անընդհատ ներարկումների բացակայության պարագայում մեր երկիրը վտանգում է իր կարևորագույն մրցակցային առավելությունը:

Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ կայուն առաջընթացի ուղի բռնելու գրավականը անցումն է նորարարական (ինովացիոն) տնտեսությանը*: Այդպես եղել է զարգացած երկրներում, այդ թվում Հատա՝տանի համար: Համաշխարհային մասշտաբով ձևավորվող «նոր տնտեսությունը» աչքի է ընկնում նյութական ռեսուրսների համեմատ մարդկային կապիտալի և տեղեկատվության կարևորության մեծացմամբ: Պետք է հաշվի առնել, որ «նոր տնտեսության» պայմաններում պահանջվում են քիզենսի սկզբնական ներդրումների անհամեմատ ավելի փոքր ծավալներ, ավելի հասանելի է դառնում արտաքին շուկան մույնիսկ երբի ավանդական սահմանափակումների առկայության պարագայում: Այս ամենը «մույ տնտեսությանը» կարևոր առավելություններ են ապահովում համեստ ներդրումաչափ ներուժով ու համեմատաբար բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսներով մեր երկրում:

Ինչևէ, այս և մի շարք այլ ոչ պակաս կարևոր իրողությունների քննական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրականացված տնտեսական քաղաքականության հանրագումարային արդյունքները դեռևս չեն արձանագրում ցանկալի սոցիալ-տնտեսական վերելք: Մի կողմից առողջական պահանջարկի

* Ինովացիան ստեղծագործական աշխատանքի վերջնական արդյունքն է, որն իրացվում է նոր կամ կատարելագործված արդյունքի տեսքով: Արտերկրներում գիտատար արդյունքը ապահովում են ընդամենը 50-55 մակրոտեխնոլոգիաները: Առավել զարգացած յոթ երկրները, տիրելով 46 մակրոտեխնոլոգիաների, իրենց ձեռքում են պահում շուկայի 80%-ը:

կառուցվածքը ցույց է տալիս, որ էապես բարելավվել է համախառն ներքին խնայողությունների ցուցանիշը՝ 1997թ. ՀՆԱ-ի մոտ -19% մակարդակից շարունակաբար աճելով մինչև 2004թ. ՀՆԱ-ի 5.3% (ընդ որում 2003 թ. նույն ցուցանիշը կազմել է 6.5%): Չնայած դրան՝ վտանգավոր բարձր մակարդակում է մնում ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը. այն դեպքում, երբ դիտարկված 45 երկրների համար միջին ցուցանիշը կազմել է 79%-ից պակաս, Հայաստանը 2001-2003 թթ. ժամանակահատվածի համար 98.5% միջին ցուցանիշով գտնվում է ցուցակի վերջում: Սպառման ծախսերի մեծ բարձր մակարդակը խթանում է արտադրությունն ու ՀՆԱ-ի աճը (ինչը և ցույց է տալիս վերջին տարիների վիճակագրությունը) կարճաժամկետ հատվածում, սակայն երկարաժամկետ հեռանկարում վտանգվում է երկրի տնտեսական կայուն զարգացումը: Ուստի անցած ժամանակահատվածի կարևորագույն դասերից մեկը ապագայի տնտեսական մոդելի մշակման հրամայականն է:

Տնտեսության վերելքը, երկարատև կայուն տնտեսական աճը ենթադրում են որոշակի *ռազմավարության* առկայություն, որում պետք է հստակորեն ուրվագրվի համակարգված գործողությունների, օրինաստեղծ, կառուցվածքային ու համակարգային վերափոխումների այն ամբողջությունը, որը երկարաժամկետ հեռանկարում բերելու է Հայաստանի սոցիալական, տնտեսական և քաղաքական հավասարակշռված զարգացմանն ու շարունակական բարգավաճմանը:

Խնդիրն այն է, որ ՀՀ անցումային տնտեսությունում ռազմավարության առաջադրումը և արդյունավետ լուծումների որոնումը պետք է ընթանան ՀՀ երկրաքաղաքական, ազգային անվտանգության, ռեսուրսային (պաշարամիջոցների), սոցիալ-հոգեբանական, նոր մշակութային, համեմատական առավելությունների ու այլ առանձնահատկությունների ենթատեքստում: Մինչդեռ նշված պայմանների համակարգումը, համատեղ դիտարկումն ու ըստ որոշակի հայտանիշների դրանցում առաջնահերթությունների սահմանումը ինքնին բարդ խնդիրներ են, որոնց լուծումը պահանջում է բազմամիասնական չափանիշների համադրում: Գոյություն չունի մեկընդմիջտ ընդունված պայմանների ու առանձնահատկությունների որոշարկված սանդղակ: Այն կարող է տրվել միայն որոշակի մոտարկումներով, որի ճշգրտությամբ էլ կարելի է դատողություններ կատարել նախապատվությունների հարցում: Ուստի և բազմաչափանիշային մոտեցումները, այդ թվում ժողովրդավարական արժեքների հետ առավելագույնս հաշվի նստելն ու սոցիալական արդարության արմատավորմանն ուղղված քաղաքական փոխզիջումները միայն կկարողանան թույլ տալ «ճանաչում-կանխատեսում-կառավարում» շրթայում առանձնացնել հանրապետության տնտեսական համակարգի զարգացումն *ուղղորդող* որոշակի ազգային մոդել զարգացման տեսանկյնի հորիզոնի համար՝ իր ռազմավարական ու մարտավարական նպատակադրումներով, դրանց իրագործման իրատեսական և գործուն կառուցակարգերով:

Վերջին շրջանում առանձին ակադեմիական ու հասարակական-քաղաքական օղակների, կառավարական ու միջազգային կառույցների կողմից մշակվել և ներդրվել են երկրի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներին առնչվող զարգացման հայեցակարգեր ու ռազմավարություններ: Սակայն դրանք գերազանցապես հրամցված, արհեստածին բնույթի են, իրենց ընդգրկմամբ՝ խիստ հատվածական, չեն առաջարկում ազգային զարգացման համապարփակ մոդել և արդյունավետ կերպով չեն լուծում հետևյալ խնդիրները.

- հայ ժողովրդի բարգավաճման և զարգացման համընդհանուր *ուղղորդվածության* ապահովումը,

- ազգային համընդհանուր և հավասարակշռված զարգացման այլընտրանքային սցենարների մշակումը, դրանց փոխադարձ ներդաշնակեցումը և համակարգումը մեկ ընդհանուր *ռազմավարության* շրջանակում,

• այդ ռազմավարության իրականացման գործընթացում շահագրգիռ պետական-քաղաքական ու հասարակական-տնտեսական օղակների *ներգրավումը*՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

Մինչ այժմ մշակված հայեցակարգերը, որպես կանոն, ունեցել են ավելի շատ արդեն իսկ առկա և վաղուց նախանշված հիմնախնդիրներին արձագանքող, հակազդող բնույթ, մինչդեռ այսօր անհրաժեշտություն է առաջացել ունենալ ազգային զարգացման ակտիվ, նախահարձակ ռազմավարություն: Վերջինս պետք է թույլ տա ընթացիկ միտումների գնահատման և երկարաժամկետ հեռանկարների ճիշտ կանխատեսման միջոցով ապահովել զարգացման գործընթացի առավելագույն արդյունավետությունը: Շատ կարևոր է նաև ապահովել նման ռազմավարության կիրառելիությունը գործառնական մակարդակում. վերացական տեսական-հայեցակարգային դատողությունների փոխարեն այն պետք է պարունակի պրակտիկ իրականությանը համապատասխանող կոնկրետ լուծումներ: Առանց նման ամբողջական ռազմավարության, բազմաչափանիշային նպատակադրումների և նպատակների իրագործման գործիքակազմի ուրվագծման անխուսափելի են բնույթով կարճաժամկետ, իսկ ընդգրկունությամբ՝ ոչ համալիր, անջատ-անջատ իրականացվող ծրագրերի ցածր արդյունավետությունն ու սահմանափակ ազդեցությունը:

Սա երկրի արդյունավետ տնտեսական զարգացման հնարավոր լավագույն այլընտրանքի ապահովման կարևոր նախապայմանն է: Այն պետք է ներառի հայ ժողովրդի (ներառյալ Սփյուռքը և ԼՂՀ-ն) հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում ծառայած մարտահրավերները, ինչպես նաև ազգային զարգացման առաջարկվող ռազմավարությունն իրականացնող տարբեր օղակների՝ պետության, հասարակական կառույցների և սփյուռքահայ գաղթօջախների հնարավոր արձագանքներն այդ մարտահրավերներին: Ընդ որում, քննարկվող մարտահրավերներն ու դրանց արձագանքները պետք է դիտարկվեն երկու առանձին հարթություններով՝ ողջ աշխարհի և տարածաշրջանի մասշտաբներով:

Մտղելում մատնանշված մարտահրավերներն ու այլընտրանքային արձագանքները, վերը շարադրված տրամաբանությամբ, պետք է առնչվեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներին հավասարապես և առանց սահմանափակումների: Այդ մարտահրավերները, առկա ռազմավարական ու մարտավարական նպատակադրումներն ու դրանց իրագործման գործունե կառուցակարգերը պետք է արժևորվեն իրենց ընդգրկունության ամբողջականությամբ, բազմաչափանիշայնությամբ և օպերացիոնալությամբ:

Դրանք իրենց փոխառնչությունների ու փոխազդեցությունների մեջ պիտի կանխորոշեն հայ ազգի շարունակական բարգավաճումը XXI դարի ընթացքում: Երկրի զարգացման հիմունքում դրված մոդելը պետք է օժտված լինի դինամիկ աճի երկարաժամկետ ներուժով, արողանա ապահովել ժողովրդի բարեկեցության շարունակական աճը, տնտեսական ապարատի արդյունավետ ընդլայնված վերարտադրությունն ու անընդհատ նուստումը, ամրապնդել երկրի մրցունակության ու տնտեսական անվտանգության աշխարհառազմավարական հիմքերը:

Г. Л. САРКИСЯН, А. Г. ЗАИМЯН - *Переходные процессы в Армении.* - Экономика Республики Армения в первой половине 1990-х годов характеризовалась глубоким и многосторонним социально-экономическим спадом, за которым последовал период восстановительного роста. В настоящее время по отдельным количественным показателям экономики страны достигнут предтрансформационный уровень, однако некоторые проблемы перехода этого периода социально-экономических процессов в Армении остаются нерешенными. В данной статье обсуждаются приоритетные направления преобразований для достижения полноты перехода на всех уровнях и во всех сферах экономики страны. Обосновывается необходимость многокритериальной стратегии долгосрочного развития страны.